



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

7th October 2018

Bulletin No 42/18

Fourth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՍԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՍԱԿԵՆ 13:5-13

Փորձեցէ՛ք դուք ձեզ՝ թէ հաւատքին մէջն էք. քննեցէ՛ք դուք ձեզ: Չէ՛ք գիտեր դուք ձեզմէ՝ թէ Յիսուս Բրիստոս ձեր մէջն է, եթէ խոտելի չըլլաք: Բայց կը յուսամ թէ պիտի գիտնաք՝ թէ մենք խոտելի չենք: Կ'աղօթեմ Աստուծոյ՝ որ դուք ո'չ մէկ չարիք ընէք. ո'չ թէ՛ որպէսզի մենք գնահատելի երեւինք, հապա՛ որպէսզի դուք ընէք ինչ որ պարկեշտ է, թէեւ մենք խոտելի թուինք: Որովհետեւ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, հապա՛ ճշմարտութեան համար: Քանի որ կ'ուրախանանք՝ երբ մենք տկար ենք, իսկ դուք՝ զօրաւոր էք. սա՛ կ'ըղձանք նաեւ - ձեր կատարելութիւնը: Ուստի կը գրեմ ձեզի այս բաները՝ բացակայ ըլլալով, որպէսզի երբ ներկայ ըլլամ՝ սաստկութեամբ չվարուիմ այն իրաւասութեան համեմատ, որ Տէրը տուաւ ինծի՝ շինելու, եւ ո'չ թէ քանդելու համար:

Կերջապէս, եղբայրներ, ո'ղջ եղէք: Կատարեա՛լ եղէք, լա՛ւ մխիթարուեցէք, միաբա՛ն եղէք, խաղաղութեամբ ապրեցէք. եւ սիրոյ ու խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ: Բարեւեցէ՛ք զիրար սուրբ համբոյրով. բոլոր սուրբերը կը բարեւեն ձեզ: Տէր Յիսուս Բրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին հետ: Ամէն:



Corinth

The Epistle of St Paul to the 2 Corinthians 13:5-13

Test yourselves to see if you are in the faith; examine yourselves! Or do you not recognize this about yourselves, that Jesus Christ is in you—unless indeed you fail the test? But I trust that you will realize that we ourselves do not fail the test. Now we pray to God that you do no wrong; not that we ourselves may appear approved, but that you may do what is right, even though we may appear unapproved. **For we can do nothing against the truth, but only for the truth.** For we rejoice when we ourselves are weak but you are strong; this we also pray for, that you be made complete. For this reason I am writing these things while absent, so that when present I need not use severity, in accordance with the authority which the Lord gave me for building up and not for tearing down.

Finally, brethren, rejoice, be made complete, be comforted, be like-minded, live in peace; and the God of love and peace will be with you. Greet one another with a holy kiss. All the saints greet you.


St Yeghiche Armenian Church is looking for people of all ages to be members of the choir. If you would like to be in the choir and be uplifted by singing our beautiful "Sharagans" (hymns) just come to church on any Sunday and introduce yourself to our Choirmaster Mr Aris Naderian or to any Member of the Parish Council.



2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՔՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11:27-33

Դարձեալ եկան Երուսաղէմ: Երբ կը քալէր տաճարին մէջ, քահանայապետները, դպիրներն ու երէցները եկան անոր, եւ ըսին. «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները. ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը՝ որ ընես այդ բաները»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի՛ հարցնեմ բան մը. պատասխանեցէ՛ք ինծի, ու ես պիտի ըսեմ ձեզի թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները: “Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՛ն էր՝ թէ մարդոցմէ”: Պատասխանեցէ՛ք ինծի»: Անոնք կը մտածէին իրենց մէջ՝ ըսելով. «Եթէ պատասխանենք. “Երկինքէն”, պիտի ըսէ. “Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր”: Իսկ եթէ պատասխանենք. “Մարդոցմէ” »: Կը վախճային ժողովուրդէն, որովհետեւ բոլորը իրապէս մարգարէ կը նկատէին՝ Յովհաննէսը: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Ես ալ չեմ ըսեր ձեզի թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները»:



The Holy Gospel of Jesus Christ according to Mark 11:27-33 *Jesus' Authority Questioned*

By What Authority I Do These Things

They came again to Jerusalem. And as He was walking in the temple, the chief priests and the scribes and the elders came to Him, and *began* saying to Him, “By what authority are You doing these things, or who gave You this authority to do these things?” *And Jesus said to them, “I will ask you one question, and you answer Me, and then I will tell you by what authority I do these things.* “Was the baptism of John from heaven, or from men? Answer Me.” They *began* reasoning among themselves, saying, “If we say, ‘From heaven,’ He will say, ‘Then why did you not believe him?’ ‘But shall we say, ‘From men?’”—they were afraid of the people, for everyone considered John to have been a real prophet. Answering Jesus, they said, “We do not know.” And Jesus said to them, “Nor will I tell you by what authority I do these things.”

Առակ այն մասին, թէ ինչ կարող է անել մարդը, երբ նրա հոգին և սիրտը ջերմանում են...

Մի անգամ Շողը ասաց Արևին.

Ամեն օր, ես թռչում եմ երկիր և ջերմացնում ամբողջ մոլորակը, բայց ես կուզեի ջերմացնել մարդու սիրտը:

Շատ լավ, դու կարող ես տալ մեկ կաթիլ արևային կրակ մարդու սրտին, – թույլատրում է Արևը: – Այդ կրակը կօգնի մարդուն դառնալ մեծագույն արարիչ: Միայն ընտրիր մարդկանցից լավագույնին:

Շողը գալով երկիր սկսում է մտածել. «Իսկ ինչպե՞ս իմանալ, թե ով է մարդկանցից լավագույնը»: Հանկարծ նա լսում է մի տղայի տխուր մտքերը. «Ոչինչ ինձ մոտ չի ստացվում: Երագում էի դառնալ նկարիչ, բայց դարձա ներկարար, սիրեցի աղջկա, սակայն նա նույնիսկ իմ կողմ չի նայում»:

Բայց չէ՞ որ դու ունես տաղանդ, երիտասարդություն և ոսկյա ձեռքեր, – բացականչում է Շողը և նվիրում տղային իր կրակը:

Առկայծեց արևային կրակը տղայի սրտում, և ստիպեց նրան բարձրացնել աչքերը, և ուղղել ուսերը: Տղան վերցնում է ներկերը և նկարում իր սիրելիի համար հրաշալի մի ծաղկեփունջ: «Սա հրա՛շք է», – ուրախանում է աղջիկը և համբուրում տղային: Հետո տղան այնպես է ներկում տունը, որ պատվիրատուն ուղղակի հիանում է. «Ես մտածում էի դուք ներկարար եք, բայց պարզվեց, որ իսկական նկարիչ եք: Իմ տունը վերածվեց արվեստի գլուխգործոցի»: Եվ տղան դառնում է հանրաճանաչ նկարիչ:

Շողը վերադառնում է Արևի մոտ և մեղավոր ասում.

Ես մոռացա, որ պետք էր գտնել մարդկանցից ամենալավագույնին, և նվիրեցի կրակը առաջին պատահած մարդուն:

Դու հավատացիր մարդուն, – ուրախությամբ պատասխանում է Արևը: Իսկ հավատը և օգնությունը կվերածեն յուրաքանչյուր մարդու արարչի և կօգնեն հաղթահարել յուրաքանչյուր խոչընդոտ:

Ռուսերենից թարգմանեց Աննա Սահակյանը



3: List of the Feasts celebrated in the Armenian church

Քրիստոսի 72 աշակերտների հիշատակության օր

Բացի 12 առաքյալներից Հիսուս ուներ նաև 72 աշակերտ, որոնց Տերն ուղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերին: Ցավոք, Ավետարանում նշված չեն այդ աշակերտների անունները: Ավետարաններում «աշակերտ» բառն ընդհանրապես գործածվում է Քրիստոսի բոլոր հետևորդների համար: Հիսուս Քրիստոսն իր առաքյալներին և աշակերտներին «իբրև գառներ գայլերի մեջ»՝ երկու-երկու ուղարկեց՝ քարոզելու Աստծո Արքայությունը՝ ասելով. «Ով ձեզ լսում է, ինձ է լսում, և ով ձեզ մերժում է, ինձ է մերժում» (Ղուկաս 10:16): Առաքյալների և աշակերտների միջև գրեթե տարբերություններ չկան, նրանք ունեն նույն իշխանությունը և առաքելությունը (Ղուկաս 10:9, 9:1), սակայն բոլոր աշակերտների անունները, Բերդեհեմի սուրբ մանուկների նման, միայն Աստծուն են հայտնի՝ գրված երկնքի արքայության սրբազան գրքում:

Հայ Առաքելական եկեղեցին Քրիստոսի աշակերտների հիշատակության օրը տոնում է Վարազա Խաչին հաջորդող շաբաթ օրը:

Commemoration of Christ's seventy-two Disciples

Besides the 12 Apostles, Jesus also had 72 disciples, whom he sent to “preach the Good News to all nations”. Unfortunately, those disciples’ names are not mentioned in the Gospels. In the New Testament the word “disciple” is used of the followers of the Jesus Christ. Christ sent out his apostles and disciples “like lambs among wolves” two by two, to go ahead of him to every town and place where he himself was about to go, saying them: “Whoever listens to you listens to me; whoever rejects you rejects me; and whoever rejects me rejects the one who sent me...” (The Gospel according to Luke 10:16). There are hardly any differences between the 12 apostles and the 72 disciples, they have the same power and authority and the same mission (The Gospel according to Luke 10:9; 9:1). However, the names of all 72 disciples, like the names of the 40 innocent children martyred in Bethlehem, are known to God only and are written in the sacred book of the Heavenly Kingdom.

Հնարամիտ դատավորը (առակ)

Ժամանակին մի վաճառական թոփերով մետաքս է հանձնում մի ուղտապանի, որպեսզի իր ապրած քաղաքը տանի, պատվիրելով, որ այնտեղ հասնելուն պես իրեն սպասի: Բայց վաճառականը հիվանդանալով ստիպված է լինում մի հյուրանոցում մնալ, հանգստանալ ու բուժվել: Ուղտապանը, տեղ հասնելով, երբ տեսնում է, որ վաճառականը ուշացավ և չի երևում, չարից դրդված, ծախում է մետաքսը ու դրամը յուրացնելով հրաժարվում է ուղտապանությունից:



Որոշ ժամանակ անց վաճառականը առողջանում է ու գալիս իր քաղաքը: Ուղտապանին երկար փնտրելուց հետո վերջապես գտնում է ու նրանից պահանջում իր մետաքսյա ապրանքը:

Խաբեբա ուղտապանը ուրանում է ամեն բան, նույնիսկ ասում է, թե ինքը երբեք ուղտապան չի եղել:

Գործը հասնում է դատավորին, բայց ոչ մի ապացույց չլինելու պատճառով հնարավոր չի լինում որևէ որոշում կայացնել: Երբ մարդիկ դատարանից հեռանում էին, հնարամիտ դատավորը կանչում է՝ **ուղտապա~ն, ուղտապա~ն:**

Այդ պահին ուղտապանը մոռանալով, որ իր արհեստը ընդամենը մի քանի րոպե առաջ ուրացել էր, բնագոյաբար հետ է դառնում: Դատավորը, այս տեսնելով, անմիջապես վճիռ է կայացնում, որ խաբեբա ուղտապանը ոչ միայն վճարի մետաքսի գինը, այլև կարգադրում է, որ մի լավ փայտածեծ տան՝ իբրև պատիժ նրա խաբեբայության ու ստախոսության համար:

Ահա այսպիսին պիտի լինի բոլոր խաբեբաների ու ստախոսների վերջը:

Ուղտապանը, վաճառականին խաբելով և սուտ խոսելով, ի՞նչ շահեց. ոչինչ: Ընդհակառակը, արդար պատիժ ստացավ: Այստեղ Դատավորը Աստված է, որն իր դատաստանը պիտի տեսնի բոլոր նրանց հետ, որոնք իրենց երկրային կյանքում հեռու կմնան աստվածային գործերից, ինչպես այս ուղտապանը, որը արդարորեն կրեց իր պատիժը: Փորձենք մօտենալ Աստծուն մեր կյանքով, որը հաճելի լինի և Աստծուն և մարդկանց:

Գրառում՝ <https://www.facebook.com/FatherHovsep?fref=nf>

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Manoukian Family for the soul of their Father and Grandfather the late **YEGHICHE MANOUKIAN** (Եղիշէ Մանուկեան), and for all the old and new deceased members of the **MANOUKIAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

***Welcome:** We wish to welcome those who are visiting our church. The Parish Council would like to invite you to make St. Yeghiche Armenian Church your spiritual home. You are cordially invited to take part in the Service and activities of our Church. Please register and enjoy its benefits. Thank you.*
St Yeghiche Armenian Church Parish Council

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգևոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

I wish to arrange a standing order/make a donation £to St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms available from Parish Council.